

2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

(*Совр. Биол.*, 1953, [стр. 8-10, т. 188])

Հայաստանի վերին դաւառներէն է Ղա-
փան, եւ իւր համապատասխանէ հին Սիւ-
նեաց Բաղք եւ Զորք դաւառներուն, որ
իրենց խոր ձորերով, բարձր դալաթնե-
րով, հսկայ լեռնային հանդոյցներով եւ
անտառային հովիտներով՝ հրաշալի ներ-
դաշնակութիւն մը կու տան բնութեան,
եւ վեհութիւն մը՝ անոնց դալաթներուն
վրայ արծուի բոյներու պէս անմատչելի
թառած բերդերը: Անոնց պարիսպներուն
տակ դարերով ակիքներու պէս եկան ու
փշրուեցան ասպատակող բարբարոս աղ-
բեր: Անոր բերդերուն թիւը չուրջ եօթը
հատ է. այս պատճառով Ղափանը եօթ-
նաբերդ գաւառ ալ կոչուած է. այս եօթը
բերդերէն ամէնէն նշանաւորներէն է ԲԱ-
ՂԱԲԵՐԴԸ:

Բաղ անուան ծագումը. — Բաղ ծաղու-
մը առած է Սիսական Նահապետի սերուն-
դէն՝ Սիւնեաց Բաղ իշխանին անունէն,
ինչպէս կը վկայէ նաեւ Օրբելեան. « Ի
շարմիցն Սիսակայ Բաղակ անուն առեալ
շայս զաւառ մասն ժառանգութեան չինէ
զքարն Բաղակու ամրոց»(1) :

Սորենացին՝ Բաղը ամբողջ դաւանի մը
անունը կը նկատէ :

Բաղաբերդը նախնական վիճակին մէջ քարաժայռ մը եղած է, եւ մեր նախնիքներէն կոչուած Բաղաց քար կամ Բաղակայ քար. հաւանաբար՝ նախ ամբողջ դաւառը կոչուած է Բաղ, ինչպէս Խորենացիի աշխարհագրութեան մէջ(2), եւ ապա ԺԱ.

և ԺԲ դարուն Բաղաբերդ կոչուած է մի-
այն այն ամուր քարաժայռը որ Բաղ դա-
ւառին մէջ էր : Աւելի ուշ Բաղաբերդը կոչ-
ուած է նաեւ Կապանի բերդ Վամ Ղափանի
բերդ, Կապան մեծ քաղաքին անունէն, և
կամ Կապան գետին որ Բաղաբերդի ստո-
րոտէն կ'անցնի և կը խառնուի Չաւըն-
դուր գետին հետ :

Բաղաբերդի հնուքիւնը. — Բաղաբերդ Սիւնեաց աշխարհին մօէնէն հզօր բերդե-
րէն մէկն է. շինութեան թուականը անո-
րոշ է. Օրբելեան սիւնեաց պատմիչը որ
աւելի մանրամասն կը նկարագրէ Բաղա-
բերդը, անոր շինութեան թուականին մա-
սին բան չ'ըսեր, և կը գտնանայ միայն
անոր նկարագրութեամբ, այսպէս. «Որ ի
մարդեան հնարից հեռացեալ են, բայց մի-
այն թէ Տէր մատնեցէ՝ Բաղաբերդ»(3) :
Բաղ իբրեւ բերդ հաւանաբար գոյութիւն
չունէր ոչ Գ. և Դ. դարերուն, որովհե-
տեւ Պորենացին, ինչպէս տեսանք, Բաղը
իբր գաւառ կը նկատէ. Եղիշէ և ոչ իսկ
կը յիշէ :

Ըստ Օրբելեանին՝ Բաղաբերդը գոյու-
թիւն ունէր արդէն Արշակ Բ-ի օրով (350-
367), որուն մէջ կ'ամրանայ Անդոպի Սիւ-
նեաց իշխանը, իւ հոն կը հաւաքէ դա-
ւառին ամբողջ աւարը եւ բերքը. «Եւ բե-
րեալ զանթիւ զաւարն զամենայն հաւա-
քեցին ի Բաղաբերդ զհացի, զխոտոյ, բլ-
յարդի, եւ զբազմութիւն զինւոյ եւ իւղոյ
եւ զղենկեաց եւ զմեղուի, զպէտպէս մրգաց

(1) Ստեփ. Օրբելիան, Պատմութիւն Նահանգին
Սիսական. ասլ. Փարիզ, 1859. Հտ. Ա. էջ 51-52:

(2) Խորենացի, Մատենադարժիւնը, տպ. Վե-
նետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 609:

(3) Ստ. Օրբէլեան, Ահդ, էջ 51:

Համարաւ անթիւս ժողովեցին ի Բաղա-
բերդ, եւ վկայմուածս հետէլոցն՝ դրէն,
զօճառս»(4)։ Մեծ դիմադրութեան մը
պատրաստութիւնն է որ կը տեսնէ Սիւ-
նեաց Անդուկի իշխանը, Բաղաբերդի մէջ.
Եւ ստուգելու ահա իբրեւ փորձորիկ մը կը
հասնի մեր երկրին վրայ պարսից Շապուհ
արքան, որ կու գայ եւ կը պաշարէ Բա-
ղաբերդը, բայց «Եւ ոչ ինչ կարագեալ առ-
նել մամուլեան տեղւոյն», որովհետեւ
անառիկ էր, մանաւանդ որ բերդը զին-
ուորապէս ալ լաւ պաշտպանուած էր ներ-
սէն։ Իբրեւ պաշտպանութեան միջոց՝ կը
դործածէին քար, քարով է որ կը կռուէին
եւ քարերու տարաւիին տակ, «Զամենայն
առ Հասարակ սատակէին »։ Շապուհ կը
կատուի եւ կը սաստկացնէ պաշարումը,
բայց անօգուտ. վերէն «Պարսաքարիւք եւ
վիճաղւմամբք զանհուն, բազմութիւն
պարսկական զօրուն դամենեմին դիմթաւալ
կացուցանէին»։ Շապուհ նոր ուժերով
կրկին կու գայ Բաղաբերդի վրայ «Ղա-
րադին եւ լի ցամամբ», եւ սահայն կըը-
կին ետ կը դառնան անթիւ կորուստներով.
պարսիկ նախարարները կը շփոթին տեսնե-
լով որ Բաղաբերդի պարիսպներուն տակ
լով որ Բաղաբերդի պարիսպներուն տակ
լով որ Բաղաբերդի պարիսպներուն տակ

... և այլն ...

Քանի մը ամիս վերջ, հակառակ որ անբաւ աւար եւ ուռեւիք դիզած էր Անդովի իշխանը, սովը կը սկսի նեղել զիրենք. Անդովի ճար մը կը մտածէ այդ ահաւոր ա-

դէտիւն առջեւը առնելու համար, եւ յարմար օր մը երբ պարսիկ զօրքերը թալանով դբաղած էին շրջակայ գիւղերուն մէջ, գիւղերանց բերդին դադտնի ճամբաներէն կը փախչի դէպի Յունահայաստան, Թէոդոս կայսեր քով, տանելով իր հետ անբաւ աւար եւ հարստութիւն. կայսրը զինք կ'ընդունի, եւ անոր կու տայ տեղ եւ պատիւ, մանաւանդ զինքը կ'անուանէ Պատրիկ. Անդովիկ հոն կ'ապրի եւ հոն ալ կը մեռնի(6) :

Շապուհ իր վրէժը կ'առնէ . լքուած բերդը կը կողոպտէ եւ կը քանդէ . սակայն Սիւնեաց իշխանները կրկին զօրանալով կը վերաջինեւն Բաղաբերդը , եւ կը պահեն մինչեւ Թ . դար , եւ Բաղաբերդը կ'ըլլայ իրենց միակ զօրաւոր ապաստանարանը , մանաւանդ երբ 852-853 թուականներուն՝ Բուղայ կ'արշաւէ Հայաստանի վրայ :

Եղրակացնելով՝ կրնանք լաւ թէ Բա-
ղարերդը դոյութիւն ունէր Գ. Է. Դ. դա-
րերուն . բայց կարեւոր դէպքերու թատե-
րաւայր չըլլալով՝ չէ յիշատակուած :

Բաղաբերդի իշխանութիւնը. — Պարսիկ տիրապետութիւնը Սիւնիքի մէջ մասնաւոր իշխանութիւն մը հիմնած էր, եւ երկիրը կը կառավարէր տեղական իշխաններով. ասիկա կը կոչուէր Սիւնեաց իշխանութիւն. Բաղաբերդ մնաց երկար տեւեմ Սիւնեաց հայ իշխաններու ձեռքը. երբեմն, Թ. դարուն ինկած է նաեւ Բաղրատունիներու իշխանութեան տակ, երբ Բաղրատունիները զօրաւոր էին բոլոր Հայաստանի մէջ, գլխաւորապէս հայ-վրացի Բաղրատունիները հոն իշխած են՝ իրենց հոգեբուն մօտ ըլլալով։ Թ. դարուն է որ կը հիմնուի նաեւ Բաղաբերդի քաղաք-

(4) *Uta*, 42 73:

(5) U_{∞} , 52 75-76:

(6) Սոյն դէպքը մեր հին պատմիչներէն, Սո-
րենայի եւ Բիւզանդ չեն յիշատակեր, ինչ որ ցոյց

կու տայ՝ թէ տեղական բնոյթ ունեցող եղելու-
թիւն մըն էր, զոր Օրբէլեան զուրա ցայտեցու-
ցած է:

